

ԵՋՆԻԿԻ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑԸ

Բաճախի. գիտ. դոկտոր Վ. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Եզնիկի միակ ձեռագիրը, որ հասել է մեզ, գրված է 1280 թ., երկի գրվելուց մոտավորապես 750 տարի հետո: Այն դարերում ձեռագիրը չէր կարող 750 տարի դիմանալ, ուստի 1280 թ. գոյություն ունեցող ձեռագիրը, որից արտագրվել է այսօրվա միակ օրինակը, պետք է առնվազն երրորդ կամ չորրորդ սերունդը լինելու: Հենց այս է պատճառը, որ Եզնիկի ձեռագիրը բավականաչափ վերադարձնելու, որոնք սրբագրվելու պետք են ունեցել:

Առաջին հրատարակության ժամանակ¹ երկը բաժանվել է 76 գլուխների և յուրաքանչյուր գլուխ ստացել է իր վերնագիրը:

Հաջորդ՝ Վենետիկի հրատարակությունը² երկը բաժանել է չորս գրքի՝ 89 գլուխներով, ընդ որում բաժանումը գլուխների խիստ կամայական է: Առաջին գիրքը կազմում է 106 էջ, ունի 28 գլուխ: Երկրորդ գիրքը 84 էջ է՝ կազմված 27 գլխից, երրորդ գիրքը 42 էջ է, 17 գլուխ, իսկ չորրորդ գիրքը 55 էջ է, բաղկացած 16 գլխից: Վենետիկի հրատարակության մեջ գլուխների վերնագրերը, որ Զմյուռնիայի հրատարակության էին, դեն են գցվել, չորս գրքերն են վերնագրվել. «Եղծ աղանդոց հեթանոսացն», «Եղծ քէշին Պարսից», «Եղծ կրօնից Յունաց իմաստնոցն», «Եղծ աղանդոյն Մարկիոնի», և ոչ մի տեղ չի ասված, թե հիշյալ վերնագրերը բնագրին չեն պատկանում:

Վերնագրերի հավելումը դեռ ոչինչ, վենետիկյան հրատարակության մեջ բնագրում աղատորեն հավելումներ ու փոփոխություններ են կատարվել³: Օրինակ՝ չառնիցի արքայութեանն կապակցությանը ավելացվել է արժանի և ստացվել է. չառնիցի արժանի արքայութեանն (էջ 291): Ընդունենք, որ այստեղ միտքը անհասկանալի է, բայց հարկավոր էր այդ բառը դնել գոնե փակագծում: Այդպես էլ վերցրել է Հակակազանը, այդպես էլ անցել է Համաբարբառ: 280—281 էջերում ավելացվել է. Քանզի Քրիստոս զամենայն կերակուրս ուտէր անխտիր, որպէս յայտ է յաւետարանին: Իսկ քէ ասիցեն, քէ Քրիստոս լետ յարութեանն եկեր զծովն և ոչ զմիս, վասն այսորիկ և մեք զծովն ուտեմք և ոչ զմիս ասելի է: Այս չորս տողը օտարամուտ է և մուտք է գործել ամենուրեք իբրև Եզնիկի բնագիր և այդ էլ թարգմանված է նույնությամբ:

Նւ ոչ աստղ ցածագոյն գոյ քան զլուսինն, քէ ի ներքոյ նորա հանդիպեալ՝ զնա խաւարեցուցէ: Եզնիկը այսպիսի նախադասություն չունի: Վենետիկի հրատարակության հավելումն է (էջ 216):

Ձեռագիրը չունի. Յեսու այնչափ առ աստուածս ունի զօրինացն Աստուած, զի զնորա ասացեալսն հաստատէ յաւետարանի. և նոքա մոլին, քէ հակառակ

¹ Դիրք ընդդիմութեանց արարեալ ի սրբոյ Եղնկայ Կողբացոյ հայոց վարդապետէ. յամի հայոց 1211 (1762), լիզմիր:

² Եղնկայ Կողբացոյ Բագրևանդայ Եպիսկոպոսի Եղծ աղանդոց. Վենետիկ, 1826 (այսուհետև՝ Եզն., Վ.):

³ Նոր թարգմանությունը ունի մոտ 500 ծանոթագրություն, որի կեսը վերաբերում է այդ հավելումներին, փոփոխություններին, միջամտություններին: Տե՛ս Ե զ ն ի կ Կ ող բ ա ջ ի. Եղծ աղանդոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի. Երևան, 1970 (այսուհետև՝ Եզն., Ե.):

ուսույշանել նոցա Յեսուն: Նոյնպէս վասն կերակրող և ի հնումն և ի նորումս գտանեմ, զի յԱստուածոյ տունայ են ի դարման: Անդ ասէ. զե՛ն և կե՛ր զամենայն անասուն և զթռչունս ուտելիս և աստ ասէ, թէ ամենայն ինչ, որ մտանէ ընդ յերան, ոչ սղծէ գնա... Ապա սրա շարունակութիւնը կազմում է մի ամբողջ էջ ևս: Եւ այս ամենը շրջանառութեան մեջ է մտած իբրև ՆՊԵՏԱՐԻ ԲՆԱԳՐԻ (էջ 279):

Ձեռագրում՝ Զի որդի լինիցի նա նմա, տպագրում նա չկա: Եւ մի նա-ի պակասով ողջ նախադասութեան նշանակութիւնը փոխված է:

Վենետիկի հրատարակութիւնն այն գիրքն է, որով ավելի քան 150 տարի Նոյնիկը ճանաչվել է, և հենց այս հրատարակութիւնը ամենից շատ է խաթարել նրա երկր: Նոյնիկը գրում է. Ահա ոչ տեսանեմք այն-ափ մեծ աստղ յերկինս, որ պատահելոյ լուսինն ծածկել կարիցէ զլուսինն: Այստեղ նա վերջացնում է Վենետիկի հրատարակիչը սրան ավելացրել է. և ոչ աստղ ցածագուն գոյ քան զլուսինն, թէ ի ներքոյ նորա հանդիպելով գնա խավաւացուցէ: Ձեռագրում՝ որպէս գիտալիս, ասէր դարձված է՝ որպէս մարգարէն ասէր (էջ 82):

Մենք թուոյցիկ բերինք այս մի քանի օրինակները, իսկ էլի որքա՛ն առանձին բառեր, կապակցութիւններ ևն մտցվել Վենետիկի հրատարակութեան մեջ:

Վենետիկից ավելի Զմյուռնիայի հրատարակութիւնն է փոփոխել բնագիրը: Մենք միայն մի երկու օրինակ բերինք և շփոթանանք այդ հրատարակութեան աղավաղումների վրա, որովհետև Վենետիկի 1826 թ. հրատարակութեանից հետո Զմյուռնիայի հրատարակութիւնը իր գործնական արժեքը կորցրեց:

Այս հրատարակութիւնը Նոյնիկի ժառանգել է Բնագրում՝ ղեկնելով դարձված է ղեկ: Նոյնիկը գրում է. Զի շունն, որ շնայ, մինչ ղեւ իսկ ի գործ շնութեան իցէ, և թէ որ շուն կոչէ ղնա, բմբոստանայ: Սրանից հետո Զմյուռնիայի հրատարակութեան մեջ ավելացված է գասնու և գալաւնայ: Նոյնիկի մոտ՝ նա ոչ ընդ ձեր մահ կամէի և ոչ ընդ իշխանին վատ խրատտուին անկանել, Զմյուռնիայի հրատարակութիւնը խմբագրել է հետևյալ ձևով. Ես ոչ գնեմ մահն կամէի և ոչ ընդ իշխանութեամբ վատ խրատտուին անկանել, որ իրարից բոլորովին տարբեր բաներ են:

Ձեռագրում՝ Զծառայ այր առաջի նորա դան հարկանեն. դարձվել է. Զծառայ աւրն առաջի նորա դան հարկանէ (էջ 82):

Բնագիրն է. Յործամ վիրաւոր որ անկեալ ի պատերազմի դնիցի, թէ լիզիցէ է: ողջացուցանիցէ. այստեղից Զմյուռնիայի հրատարակութեան մեջ ավելացվել է. գոր առալէգն կոչեն: Սրան հետևել են բոլոր տպագրութիւնները: Ձեռագիրը ունի Երազմանք ձգիցեն, Զմյուռնիայի հրատարակութիւնը դարձրել է էրէ գազանք ձգիցին (էջ 107): Ձեռագիրը ունի՝ անգեղց ի հեռաստանէ գգիշու անկանելոյ. դարձվել է՝ Անգեղաց ի հեռաստանէ գգէշս ակնարկել ղիտաուրութեան:

Կանգ շինք առնում բառային, կապակցային շատ փոփոխութիւններ լինում:

Սկսած Զմյուռնիայի հրատարակութիւնից, բոլոր տպագրութիւնները շունեն Ուրպէս մարգարէն ասէ, թև ամենայն մարմին խոտ է նախադասութիւնը:

Նոյնիկի երկում օտար հավելումները, վրիպումները, դիտավորյալ անտեսումները հասնում են հարյուրների, ուստի անհրաժեշտ է ունենալ ձեռագրի հիման վրա պատրաստված անխաթար մի հրատարակութիւն, քանի որ մեր գիտական աշխատանքներում Նոյնիկից բերված օրինակները շատ դժգոհութիւն ու թե Վ դարի օրինակներ են, այլ XVIII կամ XIX դարի:

Մի քանի խոսք էլ բանասիրական միջամտութիւնների առիթով, որոնք, սակայն, Նոյնիկի բնագիրը չեն աղավաղել. բանասիրական դիտողութիւնները արվել են, բայց բնագրի մեջ դրանք չեն մտել, ուստի և մնացել են իբրև կողմնակի դիտողութիւններ: Մեզ համար այսօր բնագիր է համարվում Վենետիկի 1826 թ. հրատարակութիւնը, որը դժբախտաբար շատ է խաթարված:

Տարօրինակ է, թե ինչպես է, որ Ա. Բագրատունին այդպիսի զեղծումներ է թույլ տվել, երբ նման բան մյուս պատմիչների նկատմամբ անթույլատրելի է համարվել: Հավանորեն այն ժամանակ այդպիսի միջամտությունները արևքան էլ անթույլատրելի չեն դիտվել, մանավանդ որ ավելի քան 60 տարի Բագրատունուց առաջ այդպես է վարվել Հակոբ Նալյանը. կարելի է ասել՝ ուղղակի խմբագրել է:

Բանասիրությունը շատ թեթև է մոտեցել Եղնիկի բնագրին և հաճախ վեճ է բացվել այնպիսի բառերի մասին, որոնց առթիվ աղմուկ բարձրացնելը ավելորդ է եղել: Եղնիկի բնագրի որևէ բառ, որ մատենագրության մեջ չի եղել կամ մեզ անծանոթ է, ենթարկվել է կասկածի: Հազար հինգ հարյուր տարվա մեջ հազարավոր բառեր կարող էին գործածությունից դուրս գալ և մոռացվել: Կլինեին այնպիսի բառեր, որոնք մի քանի ընտրյալներ միայն կարող էին իմանալ. և վերջապես միջին Եղնիկը չէր կարող նոր բառեր կազմել կամ ունենալ իր գավառի բառը: Սրանք շատ բանասերներ հաշվի չեն առել:

Եղնիկը գրում է. Զի մի մքարքն, որ զբոքն շողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին (Եղն., Վ., էջ 6): Բաբգեն Վարդապետը, Եղիշե Դուրյանը առաջարկել են մքարքն փոխել մքերքով, երբ մքարք ժողովրդական բառ է, որ նշանակում է տեսողությունը մթնեցնող բիծ, ճպուռ:

Այդ նույն նախադասության մեջ շողայցեն բայը ուղղվել է լողայցեն, մինչդեռ շողայցեն լողալ է նշանակում: Հայկազյանը այս նշանակության համար Եղնիկի օրինակի հետ բերում է նաև Սեբերիանոսից. Յորժամ մանր նաւքն ի մէջ մեծամեծ նաւացն շողայցեն: Շողամ գրաբարում նշանակում է նաև սավառակ՝ այսինքն օդում լողալ:

Ձևագիրը ունի. Որ ի լինելն և ի գոյանալ եկին ի չգոյէ և ի գոյէ: Այս պարզ ու հասկանալի նախադասությունը փոփոխված է հետևյալ ձևով. և ի գոյանալ եկին ի չգոյէ ի գոյ: Եղնիկը ասում է. գոյացան գոյից և չգոյից. մինչդեռ բանասերները դարձրել են գոյացան չգոյից գոյի, որ ավելորդ կրկնաբանություն է: Եղնիկը իր այդ միտքը մի քանի տեղ է հայտնում: Զի ածն ի չգոյէ ի գոյ զգոյսն և եցոյց յոչնչէ յինչ գչեսն: Եղնիկի նպատակն է ասելու, թե չգոյից գոյացան կամ Աստված չգոյից գոյացրեց:

Եղնիկը գրում է. Զի եթէ պարզ բնութիւն էր հիւղն և մենակերպ, և աշխարհս ի յօդուածոց և ի պէսպէս բնութեանց և ի խառնուածոց հաստատուալ է, անհնարին է ասել, եթէ հիւղեայն լեալ իցէ: Աճառյանը առաջարկել է հիւղեայն դարձնել ի հիւղեայն: Մինչդեռ Եղնիկը ժխտում է հիւղի եղած լինելը, ոչ թե ուղում է ասել, թե աշխարհը հիւղից է առաջացել, այլ ասում է. հյուսղ չի եղել:

Եղնիկը գրում է. Նոյնպէս և զերկիր սեղմացեալ տեսանեմք և բարձեալ բերէ զհրաման հրամանատուին. և զայլսն ամենայն համակերտ ծառայեցեալս հրամանաց արարչին: Այս համակերտ բառը Եղիշե Դուրյանը դարձրել է համակերպ, որ նոր թարգմանության մեջ դարձել է նույն կերպ: Նախ Եղնիկը այդքան անխելք չէր, որ Երկինքը, երկիրը, ուղտը, լուսն և ստեղծված այլ գոյացություններ նույնանման անվաներ. նա, համակերտ ասելով, հասկանում է բարեհարմար ստեղծված, և նախադասության իմաստն էլ հենց այդ է: Այս բառը ունի նաև Նարեկացին (Եղն., Վ., 40):

Մարիեսը գրեթե ամեն մի չհասկացած, ժամանակին վեճի առարկա դարձած նախադասության, բառի, արտահայտության միջամտել է, ավելացրել, պակասեցրել է, հարմարեցրել իրեն: Միայն թե նա իր մտքած փոփոխությունները առանձնացրել է՝ ցույց տալով, որ ինքն է արել: Բերենք միայն մի օրինակ. Եղնիկը գրում է Մովսցույ զկով գործեաց, Մարիեսը դարձրել է. Մովսցույս կով գործեաց: Բնագրում ծովացույ ենթակա է, Մարիեսը ենթական խնդիր է դարձրել, եզակին փոխել է հոգնակի. որպես թե Կովը ծնել է ծովացույներ: Այս նախադասության մասին մի քիչ հետո:

Սակայն արդար չի լինի շատ, որ բանասիրական ուղղումների մեջ կան այնպիսիք, որոնք ձիշտ են և տեղին: Օրինակ՝ Զի մարմնաւորի չէ հնար, թէ ի ջուրս կեցցէ. մարմնաւորի առաջարկված է փոխել ցամաքայնոյ: Մարմնոց հոգնակի ձևը առաջարկված է եղակի՝ մարմնոյ. իմաստը այդ է պահանջում:

Եղնիկն ունի. Ուստի յափշտակութիւնը սահմանաց են և գեղից և օտար քաղա-
հաց: Երրորդ Բյուզանդացին առաջարկել է ատար-ը ուղղել ատար: Միանգա-
սայն ճիշտ է: Բնագրի քաղաքս իգականաց ուղղված է քաղաքս իգականաց: Չե-
ռագիրը ունի տնայաբնիչ, ուղղված է անարար ինչ:

Չնոագիրը ունի. Ապա թէ ասիցեն, թէ հիւղն ի յԱստուած էր... պարտ էր
խնդրել որպէս դատիչ ի նմանէ: Չատիչ ուղղված է զատ ինչ, որ ճիշտ է:

Եւ աշտեղ կուղել Եղնիկի նորագույն թարգմանութեան մի վրիպումի
միայն ուղղորդութիւն հրավիրել: Եւ ոչ ընդ ձեռ մահ կամէի և ոչ ընդ իշխանին՝
վատ խրատատուի անկանել (Եղն., Վ., էջ 76): Թարգմանված է՝ «Եւ չէի կա-
մենում, որ գործ մեռնէի, ոչ էլ վատ խրատատուի աղղկացութեանը ենթարկ-
վելիք» (Եղն., Ե., էջ 65):

Այս նախագասութիւնը շահականալով, Ձմրուոնիայի հրատարակիչները
փոխել, կամիմ րայի խնդիրները դարձրել են հայցական: Մինչդեռ կամիմ
առնում է նաև ընդ նախդիրով հայցական. Հայկադայանը այս նշանակութիւնը
առանձնացրել և բերել է հետևյալ օրինակները. Ոչք կամին ընդ արդարութիւն
իմ (Սաղմ., ԼԳ 31): Յրուեա ղհեթանոսս, ոչք կամին ընդ պատերազմ (Սաղմ.,
ԿԷ 32): Եւ աշտեղ կամիմ նշանակում է հանելի լինել, համաձայնվել: Ուստի
այլ նախագասութեան բացատրութիւնը կլինի. ինձ հանելի չէր (Եւ համաձայն
չէի) ձեռ մահի և ոչ էլ իշխանի՝ վատ խրատատուի ընկնելը: Չէ՞ որ ըստ Աստ-
վածաշնչի Աստված սատանային երկնքից վար նետեց:

Վե՛հ է զնացել նաև Եղնիկի գործածած հասակ բառի վերաբերյալ. նախա-
դասութիւնը հետևյալն է. Այլ յօժարեցոյց ղկեսսն լուսաւորաց երկիր պագա-
նել և ղայլս՝ օդոյ, հրոյ, երկրի, ջրոյ և հասակաց և փայտից և բարանց, մինչև
օձից և պղանաց և ճճեաց անգամ (Եղն., Վ., էջ 109):

Մենք կարծում ենք Ձմրուոնիայի հրատարակութիւնը ճիշտ է արել, որ
հասակաց ուղղել է հասկից, միայն պետք էր ուղղել հասկաց: Եւ այդպէս էլ է.
հասկերը նույնպէս պաշտամունքի առարկա են եղել:

ԵՂՆԻԿԻ ԲՆԱԳՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Եղնիկի բնագիրը, ինչպէս ասվեց, մեզ հասել է միայն մի ձեռագրով, որը
դրված է XIII դարի վերջին (1280 թ.): Այն լեզվական թերութիւնները, որ առ-
կա են ձեռագրում, Եղնիկի լեզվին ու ոճին անհարիր լեզվական վրիպումներ են,
որ արդյունք են ձեռագիրը ընդօրինակող գրիչների սխալմունքների ու գուցե
մեղք չլինի ասել՝ նաև անգիրութեան: Տարիների մեր պրպտումները թելադրում
են մեզ այդ վրիպումներից մի բանիսը նշել և ցույց տալ մեր կարծիքով այն
ճիշտը, որ բնագիրը պետք է ունենար, սակայն չունի:

Բնագիրն է. Այնչափ ցուցանէ ողորմութիւն, մինչև զգրաստու ընճամոյն
անկանելոյ բեռամբ, չհրամայէ զանց առնել (Եղն., Վ., էջ 277): Անկանելոյ
անորոշ գերբայը որոշիչ է, սակայն որոշիչ է ոչ թե ընճամոյն ձեռ համար, որ
հատկապէս է, այլ զգրաստու ձեռ համար, որ գործիական հոլովով է կի-
րաւորած. զանցառման խնդիր է: Ուստի անկանելոյ ձեռ պետք է ուղղել անկա-
նելով⁴: Եղնիկը այդպիսի սխալ թույլ չէր տա. անկանելոյ որոշիչը անմիջապէս
հաջորդում է ընճամոյն ձեռին, կարծվել է զրա որոշիչն է:

Քանզի մարդոյ մարմին ի շորից տարերց խառնեալ է... և թէ մի ինչ պա-
կասիցէ կամ չուլիցէ, ցաւս գործէ ի մարմնին. և այն կամ ի շատ ուտելոյ
և րմպելոյ լինի, կամ ի սաստիկ պահոց, կամ յանխտիր կերակրոց կամ յոյժ
ի տօրի աշխատելոյ (Եղն., Վ., էջ 81): Աշխատելոյ բացառական հոլովով է,
ինչպէս և ուտելոյ, րմպելոյ... Դրիչը կարծել է ի նախդիրը (ի տօթի) վերա-
բերում է աշխատելոյ բառին, այնինչ այդտեղ ինչ ներգոյականի նախդիրն է,

⁴ Այս և մի երկու այլ նախագասութեան վրա մեր ուղղորդութիւնը հրավիրել է դասախոս
Բ. Նազիբեկյանը:

իսկ բացառականը մնացել է առանց նախդիրի. աշխատելու բառը պետք է լիներ յաշխատելու:

Տորժամ լանմունս իցէ և լնլոյն, շուրջ զանօթովն ծրանայ (Եզն., Վ., էջ 216): Այս նախադասության մեջ լնլոյն ձևը անիմաստ է. ի՞նչ հոլովով է զըրված և ի՞նչ նշանակությամբ: Յանմունս ներգոյական է, ուստի լնլոյն պետք է նույնպես ներգոյական լիներ, ուստի լնլոյն անիմաստ ձևը պետք է ուղղել ի լնուլն:

Մի այլ նախադասություն ևս այսպես է. Զինն հազար ում զեղջ և ապաշաւ լինիցի առ ի գար հայելոյ իւր յուղիղ արարածսն (Եզն., Վ., էջ 127): Բերված նախադասությունը թարգմանված է. «Ինը հազար տարի պիտի զղջար ու ցավեր, որ նա ծուռ է նայում իւր բարի արարածներին»: Բայց գրաբար բնագրում իւր այնպես է գործածված, որ քերականորեն թույլ չի տալիս այդպես թարգմանել, ուստի իւր պետք է ուղղել յիւր կամ նախադասությանը այլ նշանակություն տալ:

Եւնիկի գրքում կարդում ենք. եւ ինքն կայ լի և յանսպառ կենդանութեան (Եզն., Վ., էջ 8): Այս տողը թարգմանված է. «Եվ ինքն էլ մնում է լրիվ ու անսպառ կենդանության մեջ»: Կամ լի պետք է ուղղվի ի լի և կամ լի-ն այլ կերպ պետք է բացատրվի:

Մի այլ նախադասություն, որ գրված է այսպես. եւ Այնչափ ինչ արար ի նսանէ, որչափ Աստուծոյ վայելէր (Եզն., Վ., էջ 21): Վայելեմ բայը նշանակում է վայելչության մեջ լինել, վայելք անել. իսկ այստեղ այդ բայը չի հարմարվում, ուստի վայելէր պետք է գրել վայել էր, որ նշանակում է պատշան էր, ինչպես որ թարգմանված է:

Յորժամ ոչ զոք կամ զինչ ինչ բարի կամ զկարիս յիշելոյ լինիցի, բնական ազդեցութիւն է (Եզն., Վ., էջ 177): Յիշելոյ այստեղ գրված է բացառական հոլովով, բայց ի նախդիրը չկա: Քերականությունների մեջ կանոն է գրված, որպես թե չ-ով սկսվող բառը երբեմն ի նախդիր չի առնում. բայց այս ճիշտ չէ. գրիչների սխալները հետագայում քերականական կանոնների ուժ են ստացել:

Միենուն 177 էջում կա մի ընդարձակ նախադասություն. եւ յորժամ յիշատակաւ լինիցի, կամ առ սիրոյ սիրելոյ լինի, կամ առ անարժանս ինչ և զվէասս աշխարելոյ: Այստեղ ժամանակի երկրորդական նախադասությունը առկա մնացած վերջակետով ավարտվել է, մինչդեռ այդ երկրորդական նախադասության գլխավոր նախադասությունն է. Գիշերական երազովքն ամվոփի ընդ երկյուղի: Միջադաս ուրպես յորժամ ի լրջեաց ծուլայցէ ավելադաս մի նախադասություն է, որ պետք է երկու կողմից առնվի ստորակետերի միջև: Ուստի աշխարհելոյ բառից հետո վերջակետը պետք է ջնջվի և դրվի ստորակետ, այլապես ժամանակի պարագայական նախադասությունը մնացել է առկախ, առանց գլխավոր նախադասության: Իսկ առ սիրոյ ուղղելի է առ սէր:

Եւ զայն ոչ գիտեն, թե երկուս մահ սպանանեն (Եզն., Վ., էջ 223): Եզնիկի լեզվի համար արտառոց է որոշիչը հոգնակի, որոշյալը եզակի, մանավանդ որ հակառակն ենք տեսնում. երկու ձևը համաձայնում է հոգնակի որոշյալի հետ. երկու արմատս (էջ 116), երկու որդիս (էջ 134): Իսկ որոշիչը հոգնակի և որոշյալը եզակի անկարելի է. Եզնիկը ունի երկուս սերմանս, երկուս մահս, զերկուս պատանիս, երկուս արս և այլն. Ուստի երկուս մահ պետք է ուղղել երկուս մահս. ինչպես որ կա մի այլ տեղում. Զի ոչ տայր թոյլ առաքեալ, թէ երկուս մահս մեռաւ (Եզն., Վ., էջ 275): Զուր է ասելն, թե արարած եղծանելի է աշխարհս (էջ 225): Այս նախադասությունը թարգմանված է. «Իզուր է (ուրեմն) ասել, թե այս աշխարհը ոչնչանալու ենթակա ստեղծված բան է» (Եզն., Ե., էջ 143):

Վերևում երկու անգամ ասված է. «Եւ զաշխարհ արարած և եղծանելի է ասէ»: Ապա «Եթէ արարած և եղծանելի է»: Այս խոսքը ասել է Պլատոնը և խոսքը այս արտահայտությանն է վերաբերում, ուստի երրորդ անգամ կրկնվածը դարձյալ այդպես պետք է լինի և ոչ թե արարած եղծանելի է: Ուստի այս նախադասությունը ևս պետք է ուղղել արարած և եղծանելի է, որովհետև Պլատոնը

միայն աշղակես է ասել: Ոչ թե Լեզնիկի արարած է, այլ արարած է և Լեզնիկի է՝ այսինքն ստեղծված է և ոչնչանալի է:

Բերենք մի այլ նախադասություն. Զինչ շար քան զօձ կայցէ և ի նմանէ թերիակէ և ի սպանող դեղոց (Եզն., Վ., էջ 63): Ի սպանող անիմաստ կապակցություն է: Այդ ի-ն պետք է ուղղել է ու կարգալ՝ և է սպանող դեղոց:

Եսնիկի աստի՛ Բառը Հայկազանը բացատրել է իբրև Լերկաւորք, աստ- և որք: Եզնիկի թարգմանիչ պրոֆ. Ա. Աբրահամյանը, հետևելով Նդիշե Դուրյանին, հասկացել է սաստիկ և թարգմանել է ավելի շատ (տե՛ս Եզն., Ե., ծան. 373): Այս բառը Եզնիկը գործածել է հետևյալ բնագրում. Եւ անտի կարգեալ հասանէր յնդիպտացիս, և ի Բաբելոնացիս, և ի փոխագացիս, և ի փյունիկեցիս զործ զրօշագործութեան և խորհուրդք նորին, և ապա ի Հելլենս, որ են Յոյնք առ Կեկրոպեաւ, և ևս յետոյ առաւել աստի՛ առ Կոռնան և Րէաւ և Դիաւ և Ապոդոնիս... (Եզն., Վ., էջ 206—207): Աստի՛ բառը աղավաղված բառ չէ: Այս բառը նշանակում է այս կողմերը (ժամանակի նշանակությամբ): Զենք ուղում սկզբի մասը նորից կրկնել՝ ... և ևս յետոյ առաւել այս ժամանակները՝ մեր ժամանակները, մոտիկ ժամանակները: Եզնիկի այդ բառը սխալ համարողները մոռացել են, որ տի՛ Ժամանակ, դար, տարի է նշանակում:

Մենք մի այլ նշել ենք, որ շատ ուսումնասիրողներ Եզնիկի բնագրում ավելորդ բառեր են մտցնում, որ շատ հաճախ անտեղի է և մանավանդ անհրաժեշտություն: Հիշենք նրա ուղղումներից հետևյալը: Պրոֆ. Աբրահամյանը 357-րդ ծանոթագրության մեջ գրում է. «Մարիսը ճիշտ կերպով նկատել է պակասը և փակագծում ավելացրել է «արագագոյն» բառը»: Մարիսի միջամտած նախադասությունն է. «Լուսին, ասեն, քան զարեգակն երեսուն օր անցեալ ընդ ամենայն աստեղատունսն՝ այսինքն ընդ ամենայն Լերկինս հասանէ ի նուն տեղի»: Մարիսը Եզնիկի մի այլ նախադասության միջից. «Զիարդ արագագոյն քան զարեգակն զլանձնաւոր լուսինն ասիցեն» (Եզն., Վ., էջ 215) արագագոյն բառը տարել ներածել է նախորդ նախադասության մեջ, բայց Մարիսը չի մտածել, որ այդտեղ Բան կապը արագագոյն չի պահանջում, այդտեղ պարզապես քան համեմատած, համեմատ է նշանակում, և վերջապես ոչ թե արագութեան մասին է խոսքը, այլ ժամանակի: Նորից բերենք ողջ նախադասությունը: «Լուսին, ասեն, քան զարեգակն երեսուն օր անցեալ ընդ ամենայն աստեղատունսն՝ այս ինքն ընդ ամենայն Լերկինս, հասանէ ի նուն տեղի, և արեգակն ի տարւոջ»։ Էլ ո՞ր մնաց արագագոյն-ը: Քան կապը Եզնիկը ուրիշ անգամ էլ Բան համեմատ նշանակությամբ գործածել է. Ամենեկն ազատ ի կարեւոյց ցանկութեանց իցէ, և ոչ Բան զնոցայն միայն, այլ և քան զամենայն քէշից (Եզն., Վ., էջ 117):

Թ. Թոռնյանը վրէժ բառը տուեալ քեղ ընդ այնք վրիժուց զամենեւեան, որ կամիցին հաւատալ ի քեղ նախադասության մեջ բացատրել է մեծ հանցանք՝ ոնիր: Բայց այս նախադասության մեջ վրեժ նշանակում է վրեժ և ոչ թե մեծ հանցանք, ոնիր: Ընդ այնք վրիժուց նշանակում է վրեժի դիմաց, իբրև վրեժի հատուցում: Ասողը հանցավոր է այն մարդու նկատմամբ, ում որ դիմում է, և ասում է իբրև վրեժի հատուցում, վրեժի դիմաց (որ դիմացինը պետք է լուծի խոստովի նկատմամբ) տալիս եմ քեղ: Այստեղ հանցանքի ու ոճիրի մասին խոսք չկա:

Զի ոչ ասէ, թէ մինչև ցերրորդ Լերկինն, այլ թէ ցերրորդ Լերկնի առանձինն ասելոյ (Եզն., Վ., էջ 261): Ազոնցը առաջարկել է առանձինն ասելոյ ուղղել առանց ինն ասելոյ: Նա հաշվի չի առել մի շարք հանգամանքներ: Ամենից առաջ «առանց արբերն ասէ» մի քիչ վերևում՝ նույն էջում կա, այնպես որ այլևս առանձինն ու առանցը գրիչը չէր շփոթի: Երկրորդ՝ հոգը հեղինակը ն է անվանում և ա թե ինն և երրորդ՝ ինն ինչ հոլովով է գրված, առանց կապը սեռական է սլահանջում և օտար արբը բառը, որ հազվադեպ է գործածված, առանց կապի խնդիր դարձնելով Եզնիկը հոլովել է և գործածել է սեռականով: Ուստի այսպիսի խոչընդոտներով ձևագրի աղավաղումը չի ուղղվի, և ուղղվածը կամայականություն կլինի: Առանձինն բառը իր տեղում է և փոփոխության են-

թակա չէ. այստեղ այն նշանակում է ուրույն ձևով, առանձին ոճով, նախորդից տարբեր ձևով: Մնում է ասելու, իսկ այս անորոշը բացարձակ սեռական է, նշանակում է ասելով: Համեմատիր. Ահա ոչ տեսանեմք այնչափ մեծ աստղ յերկինս, որ պատահելով լուսինն՝ ծածկել կարիցէ ղլուսինն (Եզն., Վ., էջ 216):

Հայկազյան բառարանը ցածագոյն բառը բերել է իբրև Եզնիկից օրինակ, իբրև V դարի բառ: Մեր ուսումնասիրած բառացանկերում այս բառը չի՞ անցել իբրև Եզնիկյան: Համենայն դեպս «Համաբարբառում» առկա է իբրև Եզնիկյան բառ: Եվ քանի-քանի այդպիսի բառեր են մուտք գործել Եզնիկի երկը և դարձել V դարի բառեր առանց դրա իրավունքն ունենալու: Դրանք պետք է ղուրս գան իրենց անիրավացի վայելած համբավից ու տեղից, երբ Եզնիկի ձեռագիրը անաղարտ ձևով հրատարակվի:

Եզնիկը գրել է. նա և այլուստ ևս մալթեմք իմանալ (Եզն., Վ., էջ 61): Հրատարակիչները այլուստ մակբայը դարձրել են յայլուստ և այս ձևով յայլուստ ոչ միայն բնագիր է մտել, այլև Եզնիկի անունով տեղ է գտել Հայկազյանում, ու նաև «Համաբարբառում»: Այլուստ հին բացառականը V դարում արդեն մակբայ էր և առանց յ-ի էր գործածվում: Համեմատիր. Այլուստ լինի օգնականութիւն և փրկութիւն հրէիցս (Եսթ. Դ 14):

Եզնիկը գրում է. Արդ յետ այսը ամենալնի հաւանութեանց յամառեալ զնոյն ի մէջ բերեն. բնութեամբ են, ասեն, չարիք և ոչ կամածինք. եթէ բնութեամբ իցեն, ընդէր օրէնք ի թագաւորաց զնիցին... Այս նախադասությունը ի՞նչ պակասություն ունի, որ եթէ-ից առաջ մի ասեմք է խցկված:

Մենք մի աշխատության մեջ արդեն ցույց ենք տվել, թե ինչպես բոլորովին անվթար բառերը վթարված ենք համարում. և ինքներս ենք վթարում: Այդպիսի մի բառ է երես, որ երևացող է նշանակում: Այս բառը նախ սկզբում հրատարակիչներից առ նախդիր է ստացել և դարձել է առ երես, կողքի արաբաժ իցէ դարձվել է արաժիցէ, մեկն էլ արաժիցէ դարձրել է արաժիցի, մեկ ուրիշն էլ երես դարձրել է երէս (երեներ): Ոչ մի միջամտության պետք չկա, ոչ էլ առ նախդիրն է անհրաժեշտ, որ ձեռագիրը չունի. երես պարզապես տեսանելի՝ երևացող է նշանակում: Ոչ երբեք ի մարդկանէ էլեալ երես արաբաժ իցլ (երևացող արաբաժ է):

Այդպես է չարաբարել բայը, որ դարձվել է չարաբարել: Նախադասությունն է. Այնպիսի արգելք արար զնա (զսատանայ) Աստուած, եթէ ինքնին այնպիսի չէր և յոժարեաց ի չարաբարել: Այս նախադասությունը թարգմանված է. «Արդո՞ր աստված նրան այդպիսին ստեղծեց, թե ինքնին այդպիսին չէր, բայց կամովին համաձայնվեց չարիքներ գործելու»:

Մինչդեռ Եզնիկը այստեղ ճշտագույն իմաստավորմամբ բռնի դեպի չարք սղելու հանգամանքն է նշում, որ Սատանան մարդուն իրոք չարություն է սովորեցնում, նրա բարքը չար է դարձնում, չարաբարում է: Հարցնում ենք. կարելի՞ է այսպիսի ստուգաբանությունը, բառի այսպիսի ճշտագույն ընտրությունը մերժել, արհեստական իմաստներ ու ձևեր վերագրել V դարի իրոք դասական հեղինակին:

Մի շատ ավելի համարձակ և մեր կարծիքով ճիշտ ուղղում ենք առաջարկում. Եզնիկը գրում է. Մինն ասէ, թէ ի մերում գեւղ ծովացույ զկով գործեաց և զգոշինն հանապազ մեք լսեմք ամենեքեան (Վ., էջ 99): Եզնիկագետների համար ծովացույ գկով գործեաց նախադասությունը փորձաբար է դարձել: Ամեն կտրգի բացատրություն տվել են, մինչև իսկ զուգավորման մասին է խոսք եղել: Այնինչ այստեղ գործեմ բայը միայն մի նշանակություն ունի. փախցնել ծովը տանել, իսկ գյուղացիները կովի գոռոցը իբր միշտ ծովից լրսում են: Իսկ գործեմ ունի՞ ալ այդպիսի նշանակություն, ո՞չ, չունի: Բայը եղել է կտրգեաց: Եզնիկը այս բայը երեք անգամ գործածել է այլ տեղերում և բոլորն էլ փախցնել նշանակությամբ: Ուրեմն կտրգեաց-ը դարձել է գործեաց: Հայկազյանը այս բայը բացատրել է՝ քարշել, ձգել յինքն, քաշել, շորթել, խախտել հանել ի տեղուցէն, ի բաց բառնալ:

Կարծում ենք, որ Իզնիկի ձեռագրերը մի անգամ սրբութիւմբ, առանց որեւէ միջամտութեան հրատարակելու ժամանակն է, որ իսկանք, թե երկու հարյուր տարեկան մէջ ինչպիսի ձեռնհարութիւններ են եղել. սերունդներին անարատ Իզնիկ է անհրաժեշտ:

ПРОБЛЕМА ВОССТАНОВЛЕНИЯ ПЕРВОНАЧАЛЬНОГО ТЕКСТА ЕЗНИКА

Доктор филол. наук В. Д. АРАКЕЛЯН

Резюме

Езник Кохбаци—представитель классической армянской литературы V века. Его труд «Опровержение сект» дошел до нас в единственном списке, датированном 1280 годом. Список содержит много неточностей и пропусков, что и послужило причиной вольного обращения издателей с трудом Езника, самовольных добавлений отдельных строк и даже отдельных страниц. Мы предлагаем издать рукопись без подобных изменений и одновременно предлагаем несколько новых конъектур к тексту Езника.